# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«26» դեկտեմբերի 2022 թվական**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

**ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Կ.Բադալյանը:**

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 22 (քսաներկու) անդամներ՝**

Վ.Սամսոնյանը, Գ.Մելիքյանը, Լ.Սանոյա[ը], Մ.Սահակյանը, Վ.Հունանյանը, Տ.Հովհաննիսյանը, Ա.Հովհաննիսյանը, Թ.Համբարձումյանը, Գ.Պասկևիչյանը, Ս.Հովհաննիսյան, Հ.Ասատրյանը, Ս.Խուբեսարյանը, Վ.Մկրտչյան, Ք.Հարությունյանը, Ա.Բեյբուտյան, Հ.Նիկողոսյանը, Ա.Մաթևոսյանը, Ջ.Միքայելյանը, Լ.Մուրադյանը, Ն.Միրզոյանը, Հ.Մարգարյանը:

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝**
**ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է) և մի խումբ քաղաքացիներ:**

Գյումրի համայնքի ղեկավար Վ.Սամսոնյանը հայտնեց, որ ավագանու Քաղաքացիական պայմանագիր խմբակցության նոր անդամի լիազորությունները ստանձնել է Վահագն Հրաչի Մկրտչյանը և շնորհավորեց նրան:

**ԼՍԵՑԻՆ.**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 284–Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ (21)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վ.Սամսոնյան
Գ.Մելիքյան
Լ.Սանոյան
Մ.Սահակյան
Վ.Հունանյան
Տ.Հովհաննիսյան
Ա.Հովհաննիսյան
Թ.Համբարձումյան
Գ.Պասկևիչյան
Ս.Հովհաննիսյան
Հ.Ասատրյան
Ս.Խուբեսարյան
Վ.Մկրտչյան
Հ.Նիկողոսյան
Ք.Հարությունյան
Ա.Մաթևոսյան
Ջ.Միքայելյան
Ե.Խանամիրյան
Լ.Մուրադյան
Ն.Միրզոյան
Հ.Մարգարյան

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 284-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1–ին կետի 1-ին ենթակետի «5 094 385 561 (հինգ միլիարդ իննսունչորս միլիոն երեք հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր վաթսունմեկ)» թիվը և բառերը փոխարինել «5 167 636 987 (հինգ միլիարդ մեկ հարյուր վաթսունյոթ միլիոն վեց հարյուր երեսունվեց հազար ինը հարյուր ութսունյոթ)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «6 246 078 679 (վեց միլիարդ երկու հարյուր քառասունվեց միլիոն յոթանասունութ հազար վեց հարյուր յոթանասունինը)» թիվը և բառերը փոխարինել «6 319 330 105 (վեց միլիարդ երեք հարյուր տասնինը միլիոն երեք հարյուր երեսուն հազար մեկ հարյուր հինգ)» թվով և բառերով:

2. Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2,3,4, հավելվածների:

3.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց:**

**ԼՍԵՑԻՆ.**

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 282-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ (21)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վ.Սամսոնյան
Գ.Մելիքյան
Լ.Սանոյան
Մ.Սահակյան
Վ.Հունանյան
Տ.Հովհաննիսյան
Ա.Հովհաննիսյան
Թ.Համբարձումյան
Գ.Պասկևիչյան
Ս.Հովհաննիսյան
Հ.Ասատրյան
Ս.Խուբեսարյան
Վ.Մկրտչյան
Հ.Նիկողոսյան
Ք.Հարությունյան
Ա.Մաթևոսյան
Ջ.Միքայելյան
Ե.Խանամիրյան
Լ.Մուրադյան
Ն.Միրզոյան
Հ.Մարգարյան

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1.Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի հանայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 282-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով «ա» պարբերությոմբ հաստատված NN 1-18 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-18 հավելվածների:

2) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով «բ» պարբերությոմբ հաստատված NN 20-34 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 19-33 հավելվածների:

3) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով «գ» պարբերությոմբ հաստատված NN 35-58 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 34-57 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

**Որոշումն ընդունվեց:**

**ԼՍԵՑԻՆ.**

3. ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

| Կողմ (21) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

Վ Վ.Սամսոնյան
Գ.Մելիքյան
Լ.Սանոյան
Մ.Սահակյան
Վ.Հունանյան
Տ.Հովհաննիսյան
Ա.Հովհաննիսյան
Թ.Համբարձումյան
Գ.Պասկևիչյան
Ս.Հովհաննիսյան

Հ.Ասատրյան
Ս.Խուբեսարյան
Վ.Մկրտչյան
Հ.Նիկողոսյան
Ք.Հարությունյան
Ա.Մաթևոսյան
Ջ.Միքայելյան
Ե.Խանամիրյան
Լ.Մուրադյան
Ն.Միրզոյան
Հ.Մարգարյան

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հատկացնել դրամական օգնություն ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1) Արցախյան պատերազմում (1991-1994 թվականներին) զոհված թվով 104 (մեկ հարյուր չորս) ազատամարտիկների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 080 000 (երկու միլիոն ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N1 հավելվածի,

2) զոհված (մահացած) թվով 215 (երկու հարյուր տասնհինգ) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 4 300 000 (չորս միլիոն երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից թվով 2 (երկու) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 30 000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N3 հավելվածի:

4) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից թվով 5 (հինգ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 75 000 (յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N4 հավելվածի:

5) 2020 թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը ներառյալ Արցախի Հանրապետությունում ծավալված մարտական գործողությունների ժամանակ անհայտ կորած համարվող թվով 7 (յոթ) զինծառայողների ընտանիքներին՝ յուրաքանչյուրին 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 140 000 (մեկ հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N5 հավելվածի:

6) 2020թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը ներառյալ Արցախի Հանրապետությունում ծավալված մարտական գործողությունների ժամանակ գերեվարված թվով 10 (տասը) զինծառայողների ընտանիքներին՝ յուրաքանչյուրին 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ՝ համաձայն N6 հավելվածի:

7) Աֆղանստանի պատերազմի 69 (վաթսունինը) մասնակիցներից յորաքանչյուրին՝ 10 000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 690 000 (վեց հարյուր իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ՝ համաձայն N7 հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2022 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց:**

**ԼՍԵՑԻՆ.**

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 103-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

| Կողմ (21) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

**Վ.Սամսոնյան**
**Գ.Մելիքյան**
**Լ.Սանոյան**
**Մ.Սահակյան**
**Վ.Հունանյան**
**Տ.Հովհաննիսյան**
**Ա.Հովհաննիսյան**
**Թ.Համբարձումյան**
**Գ.Պասկևիչյան**
**Ս.Հովհաննիսյան**
**Հ.Ասատրյան**
**Ս.Խուբեսարյան**
**Վ.Մկրտչյան**
**Հ.Նիկողոսյան**
**Ք.Հարությունյան**
**Ա.Մաթևոսյան**
**Ջ.Միքայելյան**
**Ե.Խանամիրյան**
**Լ.Մուրադյան**
**Ն.Միրզոյան**
**Հ.Մարգարյան**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի «Ն.Տիգրանյանի անվան թիվ 1 արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դասասենյակի վերանորոգման և գույքի ձեռքբերման նպատակով դրամական միջոցներ հատկացնելու մասին» N 103-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ որոշման 1-ին կետում նշված հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2022 թվականի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով»:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրենին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց:**

**ԼՍԵՑԻՆ.**

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 187-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

| Կողմ (21) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

Վ.Սամսոնյան
Գ.Մելիքյան
Լ.Սանոյան
Մ.Սահակյան
Վ.Հունանյան
Ա.Հովհաննիսյան
Թ.Համբարձումյան
Գ.Պասկևիչյան
Ս.Հովհաննիսյան
Հ.Ասատրյան
Ս.Խուբեսարյան
Վ.Մկրտչյան
Ա.Բեյբուտյան
Հ.Նիկողոսյան
Ք.Հարությունյան
Ա.Մաթևոսյան
Ջ.Միքայելյան
Ե.Խանամիրյան
Լ.Մուրադյան
Ն.Միրզոյան
Հ.Մարգարյան

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոց N 102/5 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 187-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հարություն Սամսոնի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց:**

**ԼՍԵՑԻՆ.**

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի №56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ (18)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վ.Սամսոնյան
Գ.Մելիքյան
Լ.Սանոյան
Մ.Սահակյան
Ա.Հովհաննիսյան
Թ.Համբարձումյան
Գ.Պասկևիչյան
Ս.Հովհաննիսյան
Հ.Ասատրյան
Ս.Խուբեսարյան
Վ.Մկրտչյան

**Ա.Բեյբուտյան**
**Ք.Հարությունյան**
**Ջ.Միքայելյան**
**Ե.Խանամիրյան**
**Լ.Մուրադյան**
**Ն.Միրզոյան**
**Հ.Մարգարյան**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, ամրացվող գույքի կազմը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի թեկնածությանը համաձայնություն տալու մասին» №56-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետով հաստատված №1 հավելվածի 8-րդ կետը լրացնել նոր՝ 15-րդ ենթակետով.

«15) համայնքային ենթակայության ճանապարհների, զբոսայգիների ու պուրակների էլեկտրական լուսավորության մոնտաժում և սպասարկում:»,

2) որոշման 4-րդ կետով հաստատված հավելված №3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 01-ից:

**Որոշումն ընդունվեց:**

**ԼՍԵՑԻՆ.**

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ԱՎՍՏՐԻԱԿԱՆ» ԵՎ «ԱՆԻ» ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

| Կողմ (21) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

**Վ.Սամսոնյան**
**Գ.Մելիքյան**
**Լ.Սանոյան**
**Մ.Սահակյան**
**Տ.Հովհաննիսյան**
**Ա.Հովհաննիսյան**
**Թ.Համբարձումյան**
**Գ.Պասկևիչյան**
**Ս.Հովհաննիսյան**
**Հ.Ասատրյան**
**Ս.Խուբեսարյան**
**Վ.Մկրտչյան**
**Ա.Բեյբուտյան**
**Հ.Նիկողոսյան**
**Ք.Հարությունյան**

Ա.Մաթևոսյան
Զ.Միքայելյան
Ե.Խանամիրյան
Լ.Մուրադյան
Ն.Միրզոյան
Հ.Մարգարյան

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Ավստրիական» և «Անի» թաղամասերի փողոցային լուսավորության ցանցի սպասարկումը վերապահել հիմնարկին:

2.Հանձնարարել հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արտավազդ Ոսկանյանին՝ համագործակցելով համապատասխան որակավորում ունեցող մասնագետների հետ կազմակերպել և իրականացնել Գյումրի քաղաքի «Ավստրիական» և «Անի» թաղամասերի փողոցային լուսավորության ցանցի սպասարկումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արտավազդ Ոսկանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց:**

**ԼՍԵՑԻՆ.**

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Ն.ԷԼԲԱԿՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

| Կողմ (20) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

Վ.Սամսոնյան
Գ.Մելիքյան
Լ.Սանոյան
Մ.Սահակյան
Տ.Հովհաննիսյան
Ա.Հովհաննիսյան
Գ.Պասկևիչյան
Ս.Հովհաննիսյան
Հ.Ասատրյան
Ս.Խուբեսարյան
Վ.Մկրտչյան
Ա.Բեյբուտյան
Հ.Նիկողոսյան
Ք.Հարությունյան
Ա.Մաթևոսյան
Զ.Միքայելյան
Ե.Խանամիրյան
Լ.Մուրադյան
Ն.Միրզոյան
Հ.Մարգարյան

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց:**

**ԼՍԵՑԻՆ.**

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

| Կողմ (21) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

**Վ.Սամսոնյան**
**Գ.Մելիքյան**
**Լ.Սանոյան**
**Մ.Սահակյան**
**Տ.Հովհաննիսյան**
**Ա.Հովհաննիսյան**
**Թ.Համբարձումյան**
**Գ.Պասկևիչյան**
**Ս.Հովհաննիսյան**
**Հ.Ասատրյան**
**Ս.Խուբեսարյան**
**Վ.Մկրտչյան**
**Ա.Բեյբուտյան**
**Հ.Նիկողոսյան**
**Ք.Հարությունյան**
**Ա.Մաթևոսյան**
**Զ.Միքայելյան**
**Ե.Խանամիրյան**
**Լ.Մուրադյան**
**Ն.Միրզոյան**
**Հ.Մարգարյան**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի, ծախսերի և եկամուտների հետևյալ հաշվեկշռվածությամբ՝

**1) եկամուտներ՝ 4 491 354.2 (չորս միլիարդ չորս հարյուր իննսունմեկ միլիոն երեք հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,**

**2) ծախսեր՝ 4 491 354.2 (չորս միլիարդ չորս հարյուր իննսունմեկ միլիոն երեք հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:**

2. Սահմանել որ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարը (այսուհետ՝ համայնքի ղեկավար) համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման ընթացքում կարող է կատարել վերաբաշխումներ բյուջեով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 10%-ի սահմաններում, սույն որոշումով հաստատված ծախսերի գործառական դասակարգման առանձին խմբերի և ենթախմբերի, ինչպես նաև ենթախմբերի ներսում, այն պայմանով, որ թույլ չտրվի սույն որոշմամբ յուրաքանչյուր ենթախմբի գծով նախատեսված հատկացումների կրճատում ոչ ավել, քան 20%-ի չափով կամ ավելացում 35%-ից ավելի չափով:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին սույն որոշմամբ հաստատված հատկացումների սահմաններում.

1)Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքի ավագանու մշտական գործող համապատասխան հանձնաժողովի ներկայացմամբ հաստատել սոցիալական ծրագրերով նախատեսված ծառայությունների և շահառուների ցանկն ու կազմակերպել վճարումների կատարումը,

2) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ ծախսերի (միջոցառումների կազմակերպում), նվիրատվությունների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը և ծախսերի իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 01-ից:

**Որոշումն ընդունվեց:**

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Վ.Սամսոնյան**________________

**Գ.Մելիքյան**________________

**Լ.Սանոյան**________________

**Մ.Սահակյան**________________

**Վ.Հունանյան**________________

**Տ.Հովհաննիսյան** ________________

**Ա.Հովհաննիսյան**________________

**Թ.Համբարձումյան**________________

**Գ.Պասկևիչյան**________________

**Ս.Հովհաննիսյան**________________

**Հ.Ասատրյան**________________

**Ս.Խուբեսարյան**________________

**Վ.Մկրտչյան**________________

**Ա.Բեյբուտյան**________________

**Հ.Նիկողոսյան**________________

**Ք.Հարությունյան**________________

**Ա.Մաթևոսյան**________________

**Ձ.Միքայելյան**________________

**Ե.Խանամիրյան**________________

**Լ.Մուրադյան** ________________

**Ն.Միրզոյան**________________

**Հ.Մարգարյան**________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

**ք. Գյումրի**
**«26» դեկտեմբերի 2022 թվական**